

ՆՈՐ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻՒՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՆՈՐԱԿԱԶՄ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ

Համագոյքի տարածքին մեր ցրուածութեան իրրեւ անխուսափելի հետեւանք եւ քաղաքական ու տնտեսական պայմաններու բերումով, վերջին տասնամեակներուն, Սփիւռքի մեր կարգ մը գաղութները նօսարացան եւ գրեթէ անհետացան, մինչ այլ երկիրներու գաղութներ հոծացան եւ բարգաւաճեցան: Կազմուեցան նաեւ հայկական քրդներ այնպիսի երկիրներու մէջ՝ ուր հազիւ մատի վրայ համրուած հայեր գոյութիւն ունէին 50ական թուականներուն: Առաջիններէն կը յիշենք Պիրմանիոյ (Ինտոնէզիա), Հնդկաստանի եւ եթովպիոյ գաղութները, վերջիններէն՝ Վէնէզուէլայի, եւ մանաւանդ եւրոպական ցամաքամասի վրայ, Արեւմտեան Գերմանիոյ, Զուիցերիոյ, Հոլանտայի եւ Սքանտինաւեան երկիրներու — մասնաւորաբար Շուէտի — հայ գաղութները:

Մատակարարելու համար հոգեւոր կարիքները այս վերջիններուն, բոլորին աչքերը Ս. Էքմիաձնի հետ ու աւելի՛ պիտի ուղղուէին քնականաբար երուսաղէմի Սուրբ Աթոռին: Արդարեւ, անցնող աշնան, Հոլանտահայ գաղութը ունեցաւ իր առաջին Հոփիւր, յանձնիս Ս. Ուխտիս երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեանի: Գրեթէ նոյն ատեն, դարձեալ Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այբազեանը, յաջողութեամբ աւարտելէ ետք Լոնտոնի Քինկզ Քօլէճի աստուածաբանական ընթացքը, կը մնկէր ժընեւ, ստանձնելու համար հոգեւոր հովուութիւնը Զուիցերիահայ փոքրաթիւ գաղութին: Իսկ Մայիսի 20ին, Սուրբ Աթոռէս դէպի Սթոքհոլմ ճամբայ կ'ելլէր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեանը, իրրեւ հոգեւոր հովիւը Շուէտահայութեան մասնաւորաբար եւ Սքանտինաւիոյ այլ երկիրներուն (Նորվեկիա, Ֆինլանտա, Տանիմարքա) ընդհանրապէս:

Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. մէկն է Ս. Ուխտիս զարգացած Միաբաններէն, որ առիթը ունեցած է հետեւելու Սորպոնի համալսարանի (Փարիզ) լեզուաբանական ճիւղին եւ հմտանալու քանի մը լեզուներու: Երկար տարիներ հովուած է Ամմանի գաղութը: Հեղինակն է «Համմուրապիի Օրինագիրքը» եւ «Հրաչեայ Աճառեան եւ իր «Լիակատար Քերականութիւն»ը» ուսումնասիրութիւններուն եւ ձեռնարկած է Թարգմանութեանը պատմա-բանասիրական մեծ արժէք ունեցող Գիլգամէշի Իլլւգազներգութեան:

Վստահ ենք որ Հայր Անուշաւան արդիւնաւորապէս պիտի վարէ իրեն վստահուած նոր այս պաշտօնը: Ան խոստացած է պարբերաբար «Սիոն»ի զրկել շահեկան եւ մանրամասն տեղեկութիւններ՝ Սքանտինաւիոյ նորակազմ գաղութներու կեանքին շուրջ:

32. — 1687, *Ասորիքաւանքի Գրիչ՝ Հայրապետ*. — Զեռ. Ս. Յ., Թիւ 1852:

33. — 1688, *Աւետարանի Գրիչ՝ տէր Արիստակէս Մաղկոյ՝ Հայրապետ*. — Զեռ. Վեհեռիկի, Թիւ 117, ըստ Սարգիսեան Յուլիանի:

34. — 1691 ից առաջ, *Աւետարան*:

Գրիչ՝ *Աստուածաւանքի Մաղկոյ՝ Հայրապետ*. — Զեռ. Երեւանի, Թ. 6765:

35. — 1691, *Աւետարանի Գրիչ՝ Կիրակոս Երէց Մաղկոյ՝ Հայրապետ Ստաւոյ՝ Ղազար Թաւրիչեցի*. — Զեռ. Երեւանի, Թիւ 247:

Ն. ԱՐԲ. ԵՈՎԱԿԱՆ